

ԱՐԵՒԵԼԵՆԴԵՐ

ԱՅԼԱՐԱՆԱԿԱՆ

Ամսաւ երկու ամիսս կը հրատարակուի 1866 եւ վերջին :
Վերջնական գինն է 40 դրամեկամ կամսինքն
Մէկ քիւիկն
Ուրիշ կ'ընայ ստորագրուիլ, Կ.Պոլս Մերմանը Պ. Յ.
Մարտարեանի գրաստանը:
Գլխարարացի սանդ վերի յարկը Թ. 5 Խաչքի սենեակը:
Ստորագրուիլն Յաւի 15 ազգի քիւեմ կ'ընայ:

Ո եւ իշէ Ազգային լաիւոր ծանուցում մը ձրի կը հրա-
տարարուի:
Ամենայան լաիւն մը հաւար քաղաք ծանուցումներուն
համեմատաբար սակարկութիւն կ'ընայ:
Իւր նպատակին յարմար եկած ստորագրեալ նամակներն
ու յօդուածները կ'ընդունուին, եւ ուզեն հե տատա-
կանով ալ կը հրատարակուին:

51 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ա. ՏԱՐԻ 1860.

ԹԻԻ 8

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ենցեալ և առջի տարուան Ազգային Պատ-
րիարքարանի, Քաղաքական և այլ Ժողովոց և
Ժողովատեղեաց ողբալի մանաւանդ գլուխը վի-
ճակը տեսնող ու լսող ազգայինք, անշուշտ ՚ի
նրոտ ազգասիրաբար կսկիծ մը կ'իմանային. բայց
և այնպէս յայտ էր թէ այն կերպ վերջին ծայրը
հասած ազգակործան երևոյթ մը շատ առեն չի
պիտի տեսէր, քանի որ ազգին Հոգևոր և Մար-
մնաւոր գլխաւորաց թմրացած խիղճը արթննալ
սկսեր ու բարոյական աջօք և կենդանի հայեցո-
ղութեամբ մը կամեցեր էին Ազգին կործանման
այն անարգ պատկերը դիտել. . . . Երբ աժմ
կը տեսնեմք նոյն Պատրիարքարանի մէջ Քա-
ղաքական Ժողով ու Ժողովատեղի մը, որ իրաւ-
ցրնէ ճշմարիտ Հայու մը աչքին տարբեր և
նքանչելի պատկեր մը պիտի երևայ:

Պատկեր մը որն որ հաճայն Ազգին ներկայ
և ապագայ ճշմարիտ բարեաց նկարագիրը կրնայ
համարուիլ:

Ո՛ւր է այն առեւտուան Ազգային Ժողովոց և
Ժողովատեղեաց ձախորդ վեճակը նկարագրող
Հայ պատկերահանը, չի գիտեմք թէ միայն Ազ-
գին գէշ վարման պատկերները ձևացընելու
պաշտօնն առած էր, որ գրեթէ այն ժամանակ-
ները իւր աշխատութիւնները այն առեւտուան
Պատրիարքարանի, Ժողովոց և Ժողովատեղեաց,
ու դանտը կազմող քանի մը դուռ անդամոց նկա-
րագրութիւններուն նուիրած էր:

Ի՜նչ, յիշաւի կարծես թէ Հայ պատկեր-

հաններէ ոմանք այս ուսմանքը սորվելուն նը-
պատակը, միայն ազգին մէջ երբեմն դժբաղդա-
բար պատահած սակաւաթիւ վատ դէպքերը
նկարագրելու համար է. . . . Ո՛ւր է հիմայ այն
Հայ Յարեի պատկերահանը, որ վրձինը ձեռք
առած սա արդի Քաղաքական Ժողովոյն և Ժո-
ղովատեղեաց վեճ ու սրտաշարժ պատկերն ալ
ազգասիրաբար նկարագրէր. . . . Ո՛ւր է կ'ը-
սեմ, և ստուգիւ ո՛ւր են ամեն անոնք, որոնք
բազում ժամանակ է անհամբեր ողբով Ազգային
Պատրիարքարանի մէջ կարգաւորեալ Ժողովներ
ու զանոնք կազմող անդամները անձնանուէր և
իրոք ազգասէր անձինքներ ըլլալը տեսնել, և աչ-
նոնք գործով, այսինքն՝ ՚ի սէր Ազգի և պայծա-
ռութեան նորին անգուլ ջանքն ու եռանդը լը-
սել կը փափաքէին:

Եւ արդ՝ ահա ասիկայս փափաքանաց հա-
մեմատ քնդ շնորհիւ Սահմանադրութեան կը
տեսնեմք այս օրուան օրս վեճ Ժողով մը, ու
հիմնալի Ժողովատեղի մը, որ իրաւամբ արժանի
են ամենաբեղեցիկ նկարագրութեան մը, այս-
ինքն բազմաց առջին կոթման Ենթակայ կարծեց-
եալ Հայոց Պատրիարքարանի մէջ զարդարուն
սենեակ մը, որ չորս կողմէն ազգասիրութեան
բաղը հոտ մը կը բուրէ: Ճակատը նստած կը
տեսնուի Սրբազան Ենձ մը, որ սրտէն ու աչ-
քերէն ՚ի սէր ազգի կայծեր կը փայլատակին.
սենեակին երկու կողմը ըստ կարի փառաւոր
նստարաններ դրուած, որոնց վրայ բազմող ան-

ձանց ամեն մեկուն երեւներէն ճշմարիտ ազգութիւնը թեան ու անձնանունը թեան հոյ բոյսը կը ժայթքեն • մէջ տեղ գրասեղան մը կեցած, որուն վրայ Ազգային նոր Սահմանադրութիւնը գրուած, իբրեւ կշիռ Ազգային գործողութեանց, և իբրեւ հայելի արդարութեան, և այլ ուրիշ ազգանպաստ գրութիւններ կարգաւ շարուած •

Ետնց առջին նստած Լոնկոպետ մը և իւր Օգնականը, որոնց անիւ կեցուածքը, քաղաքական հասկացողութեան ու ազգասիրաբար վարմունքը, անգու և սրտաշարժ ատենաբանութիւնները Ժողովոյն և Ժողովատեղոյն հիացմանն ու վեհութեանը արձագանք մը կը պատճառեն •

Ա երջապէս Լոնկոպետն Ժողովականաց, Ժողովականն առ Սրբազան Մարտիրոսին, և Մարտիրոսն հաւանքն Ազգին հետ հարկ եղած սիրոյ և միութեան յարաբերութիւնը կապակցութիւններուն ամրանալը նոյն տեղ յայտնի կը նշմարուին, երբ ընդհանուր Ազգին ամեն մեկ գործերուն կայսնը ուղղութեան և արդարութեան վրայ ըլլալու համար, Ազգային Արարչականները իւր Արեւիկային հետ ապրութեան, և իւր Ազգին (բաց ի նուազութեան) պատուաւոր լոյ Սուրբապետները (քարոզիչները), հոն հրահրուած, (խորհրդապէս) նորապէս Ազգի բարի և օգտաւէտ առաջարկութիւններ կ'ըլլուն • որոնք որ ուրիշ ատեններ անիրաւ յանդիմանութիւններ լսելու և կամ ազգին մէջ դատարկութեան ընդհանուր վայ չի խօսելու, ու սատարի լռութիւն պահելու բռնի պահանջմունքներ ու պատուէրներ ընելու համար միայն կը կոչուէին • իսկ այժմ • • •

Ահա հոս է ներարգրութեանս զմայելի և յոյժ գեղեցիկ տեսարանը, որ Հայ Ժողովուրդը հեռ երեկուան դժբաղդ վիճակին մէջ յայտեր թէ ամենամեծ կարօտութիւն ունէր կար-

գաւորէալ Սահմանադրութեան մը, որ ահա այսօր հաստատուեալ և ի գործ ածեալ կը տեսնուի Ազգային այս կեդրոնին մէջ • Կարօտութիւն ունէր անվարձիւն, և « Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց » Ազգապետի մը, ահա դեմը յայտ յանդիման և պայծառ կը տեսնես • Կարօտութիւն ունէր անձնանուէր, և « Ազգ իմ աչք իմ » ըսող և գործով ազգասէր անձնանուէրէ բաղկացեալ Քաղաքական Ժողովին, եթէ չեմք սխալը՝ ահա անշուշտ ասոնք են որ սոյն տեղ յաջ և յահեակ բաղկեալ կան • Կարօտութիւն ունէր քաղաքակրթեալ և ուսումնական Լոնկոպետի մը, որ ահա նոյնպէս հոն տեղ ներկայ կ'երևի •

Ա երջապէս կարօտութիւն ունէր նաև անշուշտ, անուշառ ու եռանդնալի Արարչականներու, և (բաց ի մեկէն) եթէ չեմք խօսու իր, աւաակի հոն ներկայացած յայտնի կ'երևին • • •

Եւ արդ ահա աստիկ այս էին՝

Աւաակային հանդէս Ազգային •

Բերկրային պատկեր ներկային •

Յուսակի երևոյթ ազգապետին •

Որ րեմն թող սա վայրկեանս խայտայ Տաճկանունի բովանդակ Հայր, որ այս անձնաքոր մը քանի մը վայրկեան Ազգային այս կեդրոնը մէկ տեղ հաւաքուելով իւր անուան փառացն ու պայծառութեանը համար առաջարկութիւններ ու բարի խորհուրդներ կը ծնին • Եւ • • •

Բայց թէ ի՞նչ առաջարկութիւն ի կողմանէ Ժողովոյն առ Արարչականաց, և օրախի ընդունելութիւն ի կողմանէ Արարչականաց, ի՞նչ կերպ խորհուրդ ի մէջ Ժողովականաց և Արարչականաց, ահա օգուտ Ազգի խորհրդածելու հարկաւոր նիւթ մը • և ասոնց վրայ ունեցած մեր հաստատուն կարծիքը աղատաբար յայտնելու իրք մը, որն որ Աստուծով յաջորդ թերթով պիտի կատարեմք •

Յետագայ յօդուածը՝ անցեալները Ղուկիուն ճուղ և Վառապէս Բաղնիկ կողմէն եկած Արեւելեանիս Յրդ թուոյն միջոցաւ և Օգոստոս 17 թուականով ելած Յաւելուածին մէջ հրատարակուած նամակին պատասխանատուութիւն մըն է, որով հեղինակը ասով լրացնու համեմատ մեր առջին անգամուան՝ նոյն թաղերուն մէջ կատարուած Արեւիկայի ընտրու-

թեան կերպին վրայօր ըրած դիտողութիւնները նորանոր հաստատուել կ'ուզէ • Եւ ասոնք ըստ պահանջման մերոյ՝ եկած յիշեալ Մամակով դո՛հ եղած, և մեր կողմէն քանի մը խօսք ընելով լռութիւն պահել էինք, վասն զի կը տեսնէինք որ յիշեալ թաղեց Արեւիկայիները Ազգային Ընդհանուր Ժողովոյն կողմէն ալ օրինաւոր Արեւիկայիներ ընդունուած գործի սկիւսեր էին •

գրուանաւ ծածկեր է, չենք գիտեր ինչ խելք բանեցընելով այնչափ ստախոսութեան համարձակեր է, կարծենք պատուաւոր ան մը ըլլալուն համար: Նաեւ նոյն նամակագիրը որ անճակաւն պատուոյ դպչելու յանդգնաբար համարձակեր է ըսելով քեզ « եղած ընտրութեան կերպին Սահմանադրութեան « համեմատ եւ ըստ ամենայնի օրինաւոր ըլլաւ » լուսն վկայ են բոլոր քաղեցիք, բաց ՚ի անճե մը » որուն համար կ'ըսեն քեզ Սահմանադրութեան 90 « յօդուածով պահանջուած պայմաններէն գուրկ « է եւ ժամանակին Սահմանադրութեան հախար « չի պիտի քայէ համբաւած է » այս մասին վրայ յօդ դատարկութիւն կը պահանջուի մեր կողմանէ նոյն նամակագրէն որ գուրկ եղող անճը յակահե յանուանէ ցուցընելու պարտաւոր է. եւ ուսկից որ լսեր է նեզանի, վասն զի սակաւին չենք յիշեր

Սահմանադրութեան համեմատ գուրկ մը, գուցէ մեր քաղին դուրս բողոքութեան գտնուին որ անոնք ալ մեր քննութեան պարտաւոր արեւեն դուրս են: Ուստի կրկնելով կ'ազատեմք նոյն նամակագրէն որ գրածին համեմատ ցոյց տալ կամ իմաց, ապա քեզ դատը բացուած է մեր ու անոր մէջ տեղը, միանգամայն ընդ պարտաւորութեամբ է ստիպել տալու նոյն խմբագիրը որուն մէջ որ նոյն նամակագիրը հրատարակած է, եւ յիշաւի « Սահմանադրութիւնը չի պիտի քայէ » համբաւողներ կը ճանչնամք ալ նեզանակներուն՝ զգացումներն ալ ստուծոյ տնօրէնութեամբը անգոյութեան մէջ անհետ կ'ըլլան:

Մնամք օրագրոյց առաջիկայ բերով հրատարակման:

Ճ Շ Մ Ա Ր Ի Տ Հ Ա Յ*

Տես թիւ 7.

« Գտնուի անոնց ուղիքը չարութեան կը վազեն, եւ արեւելիս փեղու կ'արտոյան »:

ՍՈՂՈՍՈՆ:

Ըստ մեր խոստման կը պարտաւորու խնքներ կայ յօդուածով յայտնել ընթերցողաց թէ որոնք են մեր Ազգին ներքին թշնամիները, և թէ առնոք ի՞նչ չարահայտ միջոցներով ընդհանուր Ազգը կործանելու կ'աշխատին, և թէ մինչև ցարդ ի՞նչ փնտններ հասուցած են անոր վրայ:

Օւրիկ լիովին Քրիստոնէութենէ և մարդկութենէ, կան Ազգերնու մէջ խել մը ճիւղաներ որոնք երդում ըրած առաջի մեծի Բարիքնի զիշեր և ցերեկ անդադար ամեն ճիւղերնին կը թափեն ժամ մը առաջ ընդհանուր Ազգը Պապական ընելու և Հռովմայ աթոռին հապարակեցնելու*:

տակեցնելու*:

Այս արբեալները (ոչ ՚ի զինոյ) ընդդէմ իբրաւանց խղճմանընին բոլորովին ծախած ըլլաւ բար աշխարհի գաղտնի, երբեմն ալ յայտնի էր, բեմն ալ կէս գաղտնի կէս յայտնի աշխարհի ձեռնարկու թիւներու ձեռք կը զարնեն, որոնց վրայ անդամ մը նայողը հարկաւ կը համոզուի թէ՛ այս ձեռնարկու թեանց հեղինակները անշուշտ Ազգին թշնամիներն են, և կը տեսնան օր մը առաջ Հայկայ սիրուն սերունդին ճգաժամը հասցնելու, և անոր ճշմարիտ անդամները ողբոց տեսարանին վրայ ճղակտոր ընելու... ճղակտոր ըլլալէ հրէշներ, Պապականութեան վատ ախոյեաններ, Ազգի և Արժանի թշնամիներ, Հայու կերպարանքով ոչ՝ Հայ Աստակներ, շանթահար ըլլալէ անօրէններ, օր մը չէնէ օր մը ձեր ճգաժամը՝ պիտի հասնի. ըսէք ինձ այն օրը ի՞նչ պիտի ընէք ձեր կտակը որո՞ւ պիտի թողուք...:

* Կը լսենք թէ այս մեր յօդուածը իբր Արեւելեան հանդէսին նպատակին ընդդէմ է եղել... Կը խնդրենք որ Յարգող ընթերցողները բարեհաճին անդամ մը նոյն հանդիսին առջի և երկրորդ թիւերը աչքէ անցընելու. ուր յայտնապէս Արեւելեանը նուիրական պարտաւորութիւն մը առած է իւր վրայ ազգին որ և ինչ կերպով ենթակոյ եղած գաղտնի կամ յայտնի փնտնները և անոնց հեղինակներուն վատ դրութիւնները օգուտ ազգիս երեսն հանել. ուստի անիրաւ են այն պանդաւները որ մեր ականջներուն մէջ կ'որոտան, այս մեր ընթերցողին համար:

* Հարկ կը սեպեմք յիշել հոս թէ մեր այս յօդուածը հրատարակելուն նպատակը չէ թէ Պապականութիւնը կամ Բողոքականութիւնը պարտաւոր է, այլ անոնց միջոցաւ մեր ազգին կրած փնտնները յայտնել է: Հետեաբար այն անձանց վատութիւնը կուգեմք որ յայտնուի որոնք շատ անգամ իրենց միտումը կը յայտնեն յիշեալ երկու ազգակործան դրութեանց:

— Սա անճոռնին նայէ՛ .

— Սա սատանան նայէ՛ .

— Սա հարամուտողը նայէ՛ .

Փսիսաց բազմութիւնը, ին խեղճ Գեորգին գլխուն մէջ արիւնք ամբողջութեամբ էր և սաստիկ կը բարկանար, որ դորճնական չէր կրնար ցրցունէր տեսածը և որ չէր երազեր, և ոչ ալ սուտ կը խօսէր .

— Աստուած վկայ Աղայք, հասար ձայնով մը կը բացագանչէ և նոյն ատեն գերեզմանին վերայ կ'ելէ և Աստուած վկայ այս հողը . . . և այլն .

— Եւ ասոնք ըսելով ուժգին կերպով մը կը զարնէ ոտքով գերեզմանին այն մասին, ուսկեց ձայնը կելէր և խիղջն կախարդութեամբ մը աղտեղը սաստիկ երերաց .

Գեորգը դեռ խօսքը չը լնցուցած, դողալով մը սաստիկ կը ցաթկէ գերեզմանէն հեռանալով, ասոր հետ բոլոր բազմութիւնը ետ ետ քաշուեցաւ իրարու մէջ մեծ պարսպութիւն մը ձգելով, և ամենն ալ գլուխին կ'երկնցընեն և մարմիննին կը ծռեն, և ոտքերնուն — մատերուն վրայ կը կայնին, անձայն, մտադիւր դողդողած իրարու վրայ կը թնցընելով . Քիչ մը ետքը, այն տեղը նորէն երերաց սաստիկ — և ահա ասդիէն անդիէն կը ճեղքուի և քարի կը տորուանքներ կ'իյնան մէջը և իր բուսած խոտերը արմատախիլ կ'ըլլան, և ահա մարդու մը գլուխ ճեղքուածքէն դուրս կ'ելայ, բազմութեան մէջ ցաթկելով և գլորելով . Ահ ու դողն ձայներ կ'արձագանքեն ժողովդեան բոլոր տիրը և զերար հրելով կը փախչին . . .

Իայց բժիշկը աներկիւղ քննելով երևոյթին պատճառը, և զարմացած յառաջ կ'երթայ ըսելով — տեսնենք տեսնենք — և նոյն ատեն այն գլորած գլուխը կարծես թէ ուղղակի դէպ ի անոր կը յառաջանայ . . .

Սատանան, սատանան, կը պռուցին գլուխը տեսնել կրցողները, հեռու կեցողներն ալ բացադանջութիւնը կը կրկնեն, և սարսափն ու դողը աւելի կը շտտնայ, փախուստն և ցրուումն ալ աւելի արագ կ'ըլլայ . Բժիշկը դաւադանք կը վերցընէ որ այն գլուխին դարնէ . . . երբոր յանկարծ կը ցաթկէ և աճապարանք փախչելով անկէ գերեզմանին մէջը կը մտնայ . . . մուկ մը . . .

— Հա՛, հա՛, ընելով ներկայ եղողները չափէ դուրս կը խնդան և յետոյ ընդ հակառակը սաստկաբար վեր ցաթկելով, քանի որ առաջ ամենն

ալ սաստիկ դողն մէջ ընկղմած էին, խիղջն ի խնդութեան կը փոխուին, և սրտի հանդարտութիւն մը ծաւալեցաւ իրենց դէմքին վրայ . քիչ մը ետքը ամենն ալ գերեզմանին ճեղքուած տեղը վաղեցին և մկանց բոյն մը դտան որոնք վախնալով ետ փախան, մէկ քանին բազմութեան մէջ և մէկ քանին ալ պաշարուելով գերեզմանատան պատին մէջ փախան .

Նոյն ատեն քահանան Գեորգին հրամայեց որ գլուխը տեղը դնէ, կարդալով խոսովումս և պղծուած գերեզմանի պէտք եղած օրհնութիւն ներք . ան ատենը որ բժիշկը գերեզմանին ծակը կը մեծցընէր առաւ Պ. Տ. ին գլուխը իւր արուեստին վերաբերեալ հետաքրքրութիւնը յագեցընելու համար և խիղջն իւր գլուխը դէմքը տխուր կերպարան մը առաւ և շրթունքներէն սարսափման բացագանջութիւն մը ելաւ, ներկայ եղողները հարցուցին պատճառը և բըժիշկը գլխուն վրայ վարէն վեր մխուած մեծ գնդապետը կը ցուցընէ, որ մինչև ըլլեղը հասած էր .

Տեսնողները սաստիկ վախցան և շատերուն մտքերը անկուեցան . . . սարսափելի խորհուրդ մը անտեղ յայտնուելու վրայ էր . . . բարձրելոյն ձեռքը այն գլուխը դուրս հանեց, արդարութեան ժամը հասցընելով, իւր Աստուածային մատովը ցրցուց յանցանքին անսխալելի կընիքը . Մարգարէն շարժուեցաւ դէմքէն ի վախճանքը և խաղաղութեան խաբէր — իսկ զԱստուածային արդարութիւնը ոչ երբէք . Այն բանը որ երբէք կարելի չէր երևակայել մարդս, գերազոյն կամքէ մը դրդեալ երևան հանեցին փոքրիկ կենդանիները այն դէպքը՝ զոր չարագործը երկրիս խորերուն յաւիտեանս թաղուած կը կարծէր .

Այն բանը որ մթութեան մէջ եղաւ՝ ահա արեգակին լուսին տակ յայտնուեցաւ .

Այն բանը որ դադող եղաւ՝ յայտնուեցաւ մեկ ամբողջ հաղորդակցութեան մը աչքերուն առջև, մանաւանդ ալ պատուելի և դատապարտութեան իշխանութիւնը ունեցող վկայից առջև . . . պահուրտեցէք . օրհնութեանցէք . սմեղասակիցք . — Աստուած զձեզ կը տեսնէ . — փախէք . — Աստուած կը հասնի . — կը ծաղընէ անոր ամենակարողութիւնը . — զմեզ կը պատժէ . — թէ որ ԱՅՍՈՐ ձեզ կը ժպտի, սարսափելին ՍԱՂԸ կու գայ . թէ որ չարագործութիւնը ընելով մոռնաք, որոտալի ձայն մը ձեզ կ'ախտի յիշեցընէ, թէ որ ձեր խղճմանքը

ցուց աղգին տղայոց, եւ քանի որ նորանոր յառաջադիմութիւններ կը տեսնենք, կը պարտաւորինք շնորհակալ ըլլալու այն նորահաստատ ընկերութեան որուն հոգը եւ խնամքը կը քաջալերեն զՊատուէւոյն եւ որուն ջանքը Յայուցելի տղայոց միտքը երթալով կը լուսաւորուի Արդ կը խնդրեմ, արդոյ խմբագիր որ այս համալսարան տեղեկութիւնս եւ շնորհակալութիւնս հրատարակելու չնորհք ընէք:

Մնամ եւայլն

Երիտասարդ ուն յԱպուգեկսի

24 Հոկ. 1860 Կ. Պոլիս

ԲԵՐՈՅԵԱԼՆ ԽՐԵՏ

ՎԵՃԱՆՁՆՈՒԹԻՒՆ

«Քաջ յաղբանակ է վեհանահին

«Մերծել խոտել գրան վատին:

Հ. Մ.

Երբոր կը տեսնես որ մէկը քեզի դէմ ատելեալ գէշ կը խօսի ու քեզ կանխէ, դու բէ ու համբերէ, եթէ որ աղնուական ետ եւ եթէ մարդկային տկարութեամբ նոյն ատեն բարկացնէր ես, անմիջապէս Եզովբոսին սա յետադայ բարոյական առակը միտքդ բեր, որ անով աւելի զօրանաս բարկութեան կերպդ զսպելու, եւ այնպէս երկրիս վրայ ըլլաս վեհանահին եւ առաքինի Մարմին մը, ու յերկնից հաճոյ Հոգի մը:

«Մեծամեծաց վայելն այս է,

«Որ ցած մարդեն վրեժ ցառնէ:

«Որ մը էջն արհամարելով ծաղը կ'ընէ զխողը, իսկ խողը անանկ կը բարկանայ որ մէկէն պիտի պատահասէր զայն. բայց իւր բարկութիւնը բռնեց, ու խոժոռ աչքով ըսայ՝ չարաչործ, ինձի դժուար չէ սորվեցընել քեզի ժու անխելքութիւնդ, բայց հաճոյ բան չէ որ ես մէկ ծոյլ անշահ անասունի մը հետ կուտիմ, վասն զի աշխատանքս չարծեր:

Առակ Եզովբոսի - Թ.

Մեծ խոնհամաքիւն է պատասխան ցտայ ցած մարդու խօսքին ու պատժել, վասն զի ազնուականութեան ջի վայրեր որ իյնի անանկին հետ: Սոկրատ փիլիսոփան լսեց որ մեկը իրեն գէշ կ'ըսէր կանխէր, միայն այսչափ ըսաց թէ՝ որովհետեւ օրինել չէ սորված անոր համար կանխէ:

Խրատ Թարգմանչին

ԲԱՐԵՎՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մասիսի Յարգոյ խմբագիրը 454 թուով Հոռմէական Հայեղբարց ունաց հիմնադրութեամբ հաստատուած «Բարեգործական» անուամբ ընկերութիւն մը յիշեցնէ ետքը. այս անգամ 135 թուով դարձեալ անոց կողմէն խրկուած նամակ մը կը հրատարակէ. ուրուն մէջ ընկերութեան նպատակը վերջի վերջոյ կը յայտնուի. «Վերջի վերջոյ» ըսինք, վասն զի քանի որ ընկերութեան կանոնները չէ հրատարակուած անկէ առաջ ինչ որ ըսուի, ցուցուի, այն գործին բուն իսկ եւ հաստատո նորատակը ի՞նչ, եւ սահմանը մինչեւ ո՞ր ըլլալը յայտնի չի հասկըցուիր: Աստի (սամ. նուա) ընկերութիւնը լիկ հաւաքդային ըլլալուն իրաւամբ թէ կանոններուն հրատարակուելէն վերջը եւ թէ յիշեալ նամակին մէջ առաջ բերուած քանի մը աննշան խօսքերուն վրայ ընդարձակ խորհրդածութեամբ մը դիտողութիւններ ընելը մեր սրբազան պարոնքն ըլլալով յուսամբ թէ քիչ օրէն՝ այն կանոններուն հրատարակուելովը (որ ինչպէս թէ նոյն խմբագիրը իւր կողմէն, եւ թէ սոյն ընկերութեան անդամներէ ոմանք կ'իմացունեն մեզ, որ յետ ընդհանուր ժողովէ մը անմիջապէս պիտի հրատարակուի) այն ատեն այս անհրաժարելի պարոնքերնիս կերպով մը պիտի կատարեմք:

— Սամակայ թաղէն քանի մը արժանահաւատ անձինք յետադայ աղօթիկներ կերպով կատարուած երկրութիւնները մեզի կը հայորդեն. խնդրելով որ օրագրոյս միջոցաւ հրատարակելք: Ասինքն յիշեալ թաղին Եկեղեցւոյն սեպհական ստացուածքը ըլլալով (որ մօտեւս կերպով մը ստացեր է եղեր), Հաճի Գահեկին տունը եւ տակը եղած խոնհամայն կէտը. չեմք դիտել ի՞նչ բանաւոր պատճառի, եւ կամ սրտ խորհրդակցութեամբ եւեր նախկին Հոգաբարձաները 10 հազար դահեկան գնով Մահմուտականի մը ծախսերն, որն որ այս կէս բաժինը 15 հազար դահեկանէն աւելի գին ընելը, եւ տարին հազար ութ հարիւր զուրուշ շահ բերելը թաղեցոյ չափերը կը վկայեն եղեր:

Երկրորդ՝ նոյն Եկեղեցւոյ նուէր ըլլալով Սրբազան Աթոռիկութեան եկած 50 հազար դահեկանը առանց մէկի մը հարցունելու հաներ ճանիկ միւրապի մը եղած յիշեալ Եկեղեցւոյն պարտքը վճարելու եւ, որ այժմիկ ամենեւին չպահանջելու եղեր, եւ այս բանն առով կը հաստատուն թէ՛ նոյն Միւրապը այն գումարը ուրիշ Հայ Եկեղեցւոյ մը տալու խնդիրներ կ'ընէ եղեր:

Այս երկու գործն ալ որ մօտ օրերն եղած բան մը ըլլալը կ'առուէն, (եթէ այնպէս է) թէ այն Եկեղեցւոյ յայտնի վասն, եւ թէ Մահմուտականի կանոններուն դէմ ոճիր մը ըլլալուն, աղգայն Արժանական եւ Քաղաքական Ժողովներու ու շարքութեանն ու դատաւորներէ կ'ընենք:

Խմբագիր-ՏԵՐԵՆ

Մ. Գ. ՏԵՐԵՆՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԳԻՒՐԳԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՃԻՆՃԱՆՃԵԼԱՐ